**Արձանագրություն N 4**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊՎՀ-ի կարիքների համար «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան — «23» փետրվարի 2017թ. ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան** ՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արթուր Թամրազյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Էլլադա Արզաքանյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձանժողովի անդամ Կարեն Մելքոնյանը՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. Տեղեկատվություն՝ Հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

1.1 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր հայտում արձանագրված անհամապատասխանությունը, հետևաբար նշված մասնակցի հայտը ևս գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին.**

**2.1.1** 9-րդ, 27-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել,

**2.1.2** 19-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված միակ մասնակցի կողմից ներկայացված գնի առաջարկում նշված ինքնարժեքն արդեն իսկ գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 19-րդ չափաբաժնի մասով գնի նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվի,

**2.1.3** 12-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկներում 12-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքները կամ ինքնարժեքների և ԱԱՀ-ի հանրագումարներն արդեն իսկ գերազանցում են այդ գնումները կատարելու համար նախատեսված

ֆինանսական միջոցները, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 12-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ չեն վարվի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով՝ հանձնաժողովը որոշեց.

ա) «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17» ծածկագրով ընթացակարգը 9-րդ, 12-րդ, 19-րդ, 27-րդ և 28-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած,

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 9-րդ, 12-րդ, 19-րդ, 27-րդ և 28-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.** Հաշվի առնելով, որ 6-րդ, 23-րդ և 24-րդ չափաբաժինների մասով առկա է ներկայացված նվազագույն գնային առաջարկների հավասարություն, ուստի անհրաժեշտություն է առաջանում 6-րդ, 23-րդ և 24-րդ չափաբաժինների մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Ոչ գնային պայմանները բավարարող գնահատված այն մասնակիցների հետ, որոնց կողմից ներկայացված գնի առաջարկներում վերոնշյալ չափաբաժինների մասով նշված ինքնարժեքները կամ ինքնարժեքների և ԱԱՀ-ի հանրագումարներն արդեն իսկ գերազանցում են այդ գնումները կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ չեն վարվի՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Հանձնաժողովը որոշեց.**

Միաժամանակյա բանակցություններ վարելու հանգամանքով պայմանավորված՝ հանձնաժողովի նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2017թ. փետրվարի 28-ին՝ ժամը 15:00-ին՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ ______________ Խորեն Պետրոսյան

______________ Արթուր Թամրազյան

______________ Էլլադա Արզաքանյան

Քարտուղար՝ ______________ Մարիամ Հայրապետյան

## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՈՐՈՇ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2017 թվականի փետրվարի 23-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

| Չափաբաժին | Գնման առարկայի համառոտ նկարագրություն | Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում | Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/ | Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|
| 9 | Թմբուկ | --- | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Ոչ մի հայտ չի ներկայացվել |
| 12 | Թմբուկ | «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ, «ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ, «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ,<br>«ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 12-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկներում 12-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքները կամ ինքնարժեքների և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ԱԱՀ-ի հանրագումարներն արդեն իսկ գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 12-րդ չափաբաժնի մասով գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ չեն վարվել: |
| 19 | Թմբուկ | «Կոմպյուտր Սերվիս» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 19-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված միակ մասնակցի կողմից ներկայացված գնի առաջարկում նշված ինքնարժեքն արդեն իսկ գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 19-րդ չափաբաժնի մասով գնի նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվել: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 27 | Մաքրող դանակ | ---- | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Ոչ մի հայտ չի ներկայացվել |
| 28 | Մաքրող դանակ | ---- | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Ոչ մի հայտ չի ներկայացվել |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**